**ԿԱՐԾԻՔ**

**Պաշտոնական ընդդիմախոսի**

**Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող 014 մասնագիտական խորհուրդ Արման Սամվելի Համբարձումյանի «ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության կատարելագործման հիմնախնդիրները» թեմայով Ը.00.03. «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ**

**Հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը**

Արման Սամվելի Համբարձումյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության կատարելագործման հիմնախնդիրների հետազոտությանը և դրանց վերաբերյալ արդյունավետ լուծման ուղիների առաջարկմանը:

ՀՀ տնտեսությունը ուղղակի և անուղղակի կերպով կապված է տարածաշրջանի մի շարք պետությունների հետ, ինչը ենթադրում է, որ տարածաշրջանային լարվածությունը կամ առևտրի խանգարումները կարող են էականորեն ազդել նրա ֆինանսական հատվածի վրա: Վերահսկիչ սթրես թեստավորումը հնարավորություն է տալիս մոդելավորելու և գնահատելու, թե ինչպես կգործեն հայաստանյան բանկերը համանման իրավիճակներում, բացահայտելու բանկերի խոցելիության աստիճանը և մշակելու ռիսկերի մեղմման ռազմավարություն:

ՀՀ բազմազան տնտեսական միջավայրում առկա են տարբեր ոլորտներ, և դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատուկ ռիսկերն ու հնարավորությունները: Վերցնենք, օրինակ, գյուղատնտեսության ոլորտը, որի դերն առանցքային է երկրի պարենային անվտանգության և արտահանման տեսանկյունից: Հայաստանի գյուղատնտեսության ոլորտը խոցելի է մի շարք գործոնների նկատմամբ, ներառյալ եղանակային փոփոխությունները, պարենային ապրանքների համաշխարհային գների տատանումները և մատակարարման շղթայի խաթարումները: Բանկերը կենտրոնացման գործակիցների օգնությամբ հնարավորություն ունեն չափելու իրենց ազդեցությունն այս հատվածի նկատմամբ և տեղեկացված որոշումներ ընդունելու ոլորտի վարկավորման վերաբերյալ, միաժամանակ՝ արդյունավետ կերպով կառավարելով իրենց ռիսկերը:

ՀՀ-ում թվային բանկային ծառայությունների ներդրման տեսանկյունից ևս նկատելի տեղաշարժ է գրանցվել, որն ավելի է ընդգծվել COVID-19 համաճարակի համատեքստում՝ պայմանավորված հաճախորդների՝ առցանց և բջջային բանկային լուծումների փնտրտուքով: Ելնելով վերոնշյալից՝ հայկական բանկերը ստիպված են եղել արագ կերպով հարմարվել՝ արդարացնելու համար հաճախորդների

սպասելիքներն անվտանգ և հարմարավետ թվային ծառայություններ ստանալու առումով:

ՀՀ առևտրային բանկերի հետագա զարգացման նկատառումով, չափազանց արդիական ու կարևոր է վերահսկողական սթրես թեստավորման, կենտրոնացման գործակիցների մեթոդների, ինչպես նաև թվային վերափոխման ուսումնասիրությունը: Սրանք ոչ միայն տեսական բնույթի հասկացություններ են, այլև գործիքներ, որոնք գործնական նշանակություն ունեն ֆինանսական ռիսկերը կառավարելու, ոլորտային կենտրոնացումը գնահատելու և թվային դարաշրջանում մրցունակ մնալու համար: Բերված փաստարկներով ատենախոսը հիմնավորել է ընտրված թեմայի հրատապությունը և արդիականությունը:

## Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է հետազոտության արդյունքներով ձևավորված մոտեցումներով կատարել առաջարկություններ ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության համակարգի կատարելագործման հիմնախնդիրների լուծման ուղղություններով: Դրված նպատակի իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որն էլ թելադրում է ատենախոսության տրամաբանությունն ու կառուցվածքը: Այդ առումով աշխատանքում խնդիր է դրվել՝

- վերլուծել ՀՀ բանկերի ֆինանսական ռիսկերի կառավարման և վերահսկողության գործընթացները,
- ուսումնասիրել ՀՀ առևտրային բանկերի գործունեությունը կարգավորող ՀՀ և միջազգային իրավական ակտերը՝ ՀՀ առևտրային բանկերի տնտեսական նորմատիվների և ռիսկերի վերահսկողության վերաբերյալ առաջարկություններ կատարելու նպատակով,
- ուսումնասիրել ընթացիկ վերահսկողական սթրես թեստավորման փորձի արդյունավետությունը՝ ՀՀ առևտրային բանկերում ֆինանսական ռիսկերի բացահայտման և մեղմացման տեսանկյունից,
- դիտարկել բանկերի թվային վերափոխման ընթացքում առաջացող կիբեռանվտանգության ռիսկերը՝ առաջարկելով համապատասխան ռազմավարություններ դրանք արդյունավետորեն մեղմելու համար,
- գնահատել թվային փոխակերպման ազդեցությունը ՀՀ առևտրային բանկերում ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության վրա,
- ուսումնասիրել ՀՀ առևտրային բանկերում վարկային ներդրումների կենտրոնացվածության աստիճանը՝ բարձր կենտրոնացումները բացահայտելու նպատակով,
- վերլուծել ՀՀ առևտրային բանկերում կիրառվող կենտրոնացման համաթվերը, բացահայտել հնարավոր խոցելիությունը՝ կենտրոնացման բացահայտումների առումով՝ առաջարկելով կենտրոնացումների գնահատման նոր մոտեցումներ՝ ֆինանսական կայունության մակարդակը բարձրացնելու նկատառումով:

## Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտ է Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերում կիրառվող ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության համակարգը, իսկ առարկան՝ Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության համատեքստում սթրես թեստավորման, կենտրոնացման գործակիցների (Հերֆինդալ-Հիրշման, Լինդա և Էնթրոպիա) և թվային փոխակերպման գործիքների ներդրման հիմնախնդիրներն են:

## Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ ներկայացվել են հետևյալ դրույթները.

1. Բացահայտվել են ՀՀ առևտրային բանկերի ներքին վերահսկողության համակարգում ֆինանսական ռիսկերի ճանաչման և գնահատման առանձնահատկությունները և դրանց հիման վրա առաջարկվել ռիսկերի վերահսկողության իրականացման բարելավված գործիքակազմ՝ գործոնային համապարփակ վերլուծական հիմքով:

2. Հիմնավորվել ու հստակեցվել են վերահսկիչ սթրես թեստավորման կիրառման անհրաժեշտությունն ու ուղղությունները՝ որպես ՀՀ բանկերում ռիսկերի համապարփակ գնահատման և մեղմացման գործիք: Ապացուցվել է, որ տարբեր սթրեսային սցենարների միաժամանակյա մոդելավորմամբ հնարավոր է ավելի ամբողջական պատկերացում կազմել բանկերի առջև ծառացած ռիսկերի վերաբերյալ, բացահայտել խոցելիության աստիճանը, ինչպես նաև մշակել ռիսկերի կառավարման համապատասխան ռազմավարություն՝ միտված բանկերի ճկունության և ֆինանսական կայունության ապահովմանը:

3. Մշակվել և առաջարկվել է ֆինանսական ռիսկերի դիվերսիֆիկացման գնահատման մոտեցում, հիմք ընդունելով Հերֆինդալ-Հիրշմանի, Լինդայի և Էնթրոպիայի գործակիցների վերլուծական փոխլրացնող արդյունքները, որի միջոցով ՀՀ առևտրային բանկերը հնարավորություն կունենան արդյունավետ վերահսկելու տնօրինվող ակտիվների տեղաբաշխման ճյուղային կառուցվածքն ըստ բնութագրիչ ռիսկերի:

4. Մշակվել է առևտրային բանկերի գործունեության թվային փոխակերպման գործընթացում ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության ճկուն համակարգ, որով հնարավորություն է ստեղծվում բարելավելու վերահսկողական գործընթացները

և միաժամանակ բացահայտելու ֆինանսական միջնորդության էկոհամակարգի արտաքին ու ներքին ռիսկային մարտահրավերները:

## Հետազոտության գիտական արդյունքների հավաստիությունը և գործնական նշանակությունը

Ա. Ս. Համբարձումյանի ատենախոսությունն իրենից ներկայացնում է ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողությանն ուղղված, մեթոդական մոտեցումների տեսական և գիտական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի առաջարկություններ՝ ուղղված ատենախոսությամբ առաջ քաշված հիմնախնդիրների կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքները և կատարված առաջարկությունները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ Կենտրոնական և առևտրային բանկերում՝ նպաստելով ֆինանսականի ռիսկերի ներքին վերահսկողության լավարկմանը: Ստացված արդյունքները գործնականում օգտակար կարող են լինել նաև ֆինանսների և ռիսկերի կառավարում դասավանդողներին և դրա վերաբերյալ հետազոտություններ իրականացնողներին: Հետազոտության հիմնական արդյունքները արտացոլվել են հեղինակի 6 հրապարակումներում:

## Ատենախոսության ծավալը և կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն բաժնից, գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության գլխավոր նպատակը և խնդիրները, ներկայացվել են հիմնական գիտական արդյունքները և դրանց գործնական նշանակությունը, տրվել են ատենախոսության տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:

Առաջին՝ «Առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի վերահսկողության տեսամեթոդական հիմքերը» գլխում ատենանախոսը երկայացրել է ֆինանսական ռիսկի գնահատման և կառավարման վերաբերյալ տեսական և կիրառական հայեցակարգերը, մոդելները և մոտեցումները: Հատկապես, շեշտադրվել են վարկային ռիսկի գնահատման ժամանակ կիրառվող Մերտոնի, KMV վարկային հսկողության և MOODY'S PUBLIC FIRM մոդելները:

Երկրորդ՝ «ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի վերլուծությունը և հիմնախնդիրների բացահայտումը» գլխում ատենախոսը ներկայացրել է ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի վերահսկողության մոտեցումները, գնահատել է վարկային ռիսկ կրող ակտիվների վրա մակրոտնտեսական և ներքին

գործոնների ազդեցությունը, փորձել է վեր հանել ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողությունում առկա հիմնախնդիրները:

Ատենախոսի առաջարկած սցենարների դիտարկման արդյունքում պարզվել է, որ վարկային ռիսկի սթրես թեստավորման ենթարկված բանկերն իրենց բնականոն գործունեությունը շարունակելու համար աչքի են ընկնում չափավոր դիմացկունության աստիճանով: Մասնավորապես ՀՀ չորս բանկ՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն, «Արդշինբանկ» ՓԲԸ-ն և «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն, ունեն բավարար ֆինանսական ռեսուրսներ առաջարկված երեք սցենարի ժամանակ նորմատիվային խախտումներ թույլ չտալու համար:

Երրորդ՝ «Ներքին վերահսկողության հեռանկարային տենդենցները և բարելավման ուղիները» գլխում ներկայացվել են թվային փոխակերպման ընթացքում բանկերի ներքին վերահսկողության համակարգի խնդիրների լուծման մոտեցումը, Լինդայի և Էնթրոպիա համաթվերի ու համաժամանակյա սթրես թեստավորման կիրառումը՝ որպես ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի կառավարման նոր և արդյունավետ ուղի: Ատենախոսի հիմնավորման համաձայն վերահսկիչ սթրես թեստավորումը կնպաստի ՀՀ կենտրոնական բանկի ընդհանուր նպատակների իրագործմանը՝ ապահովելու առևտրային բանկերի անվտանգությունն ու «առողջությունը» և համամասնական մոտեցմամբ խթանելու արդյունավետ մրցակցությունը:

Եզրակացություն բաժնում ներկայացվել են հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերի ուսումնասիրությունից բխող եզրահանգումներ, ներկայացվել են վերլուծությամբ հիմնավորված առաջարկություններ:

## Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Թվարկված առավելությունների հետ մեկտեղ թեկնածուական ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից: Դրանցից նշենք հետևյալները.

• Ատենախոսության նպատակը՝ «... Ատենախոսության նպատակն է հետազոտության արդյունքներով ձևավորված մոտեցումներով կատարել առաջարկություններ ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության համակարգի կատարելագործման հիմնախնդիրների լուծման ուղղություններով: ...» հստակեցման և վերաշարադրման կարիք ուներ: Հարց է առաջանում, իսկ եթե հետազոտության արդյունքներով մոտեցումներ չձևավորվեին, ապա ինչ հիմքերով էր ատենախոսը փորձելու կատատաելագործել առևտրային բանկերում ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության համակարգը:

• Ատենախոսությունում որպես գիտական նորույթ ներկայացված առաջին դրույթը՝ «... Բացահայտվել են ՀՀ առևտրային բանկերի ներքին վերահսկողության համակարգում ֆինանսական ռիսկերի ճանաչման և գնահատման առանձնահատկությունները և դրանց հիման վրա առաջարկվել ռիսկերի

վերահսկողության իրականացման բարելավված գործիքակազմ՝ գործոնային համապարփակ վերլուծական հիմքով...;» **վերախմբագրման և նորույթի տարր պարունակող բարելավված գործիկազմը բացելու ու** լրացուցիչ հիմնավորելու արիք ուներ:

• Ատենախոսությունում որպես գիտական նորույթ ներկայացված երկրորդ դրույթը՝ «... Հիմնավորվել ու հստակեցվել են վերահսկիչ սթրես թեստավորման կիրառման անհրաժեշտությունն ու ուղղությունները՝ որպես ՀՀ բանկերում ռիսկերի համապարփակ գնահատման և մեղմացման գործիք: Ապացուցվել է, որ տարբեր սթրեսային սցենարների միաժամանակյա մոդելավորմամբ հնարավոր է ավելի ամբողջական պատկերացում կազմել բանկերի առջև ծառացած ռիսկերի վերաբերյալ, բացահայտել խոցելիության աստիճանը, ինչպես նաև մշակել ռիսկերի կառավարման համապատասխան ռազմավարություն՝ միտված բանկերի ճկունության և ֆինանսական կայունության ապահովմանը ...:» **վերախմբագրման և հստակեցման կարիք ուներ: Մասնավորապես, առաջարկվող ռիսկերի կառավարման ռազմավարության շրջանակներում արդյոք կարիք չկար ճշգրտելու բանկի կայունության և ճկունության առաջնահերթությունները:**

• Ատենախոսությունում որպես գիտական նորույթ ներկայացված երրորդ դրույթը՝ «... Մշակվել և առաջարկվել է ֆինանսական ռիսկերի դիվերսիֆիկացման գնահատման մոտեցում, հիմք ընդունելով Հերֆինդալ-Հիրշմանի, Լինդայի և Էնթրոպիայի գործակիցների վերլուծական փոխլրացնող արդյունքները, որի միջոցով ՀՀ առևտրային բանկերը հնարավորություն կունենան արդյունավետ վերահսկելու տնօրինվող ակտիվների տեղաբաշխման ճյուղային կառուցվածքն ըստ բնութագրիչ ռիսկերի...:» **երկրորդ հատվածով լրացուցիչ մեկնաբանման կարիք ունի: Մասնավորապես, ատենախոսը հստակ չի նշել, իորոշվելու գործնականում կոնկրետ ուսումնասիրված առևտրային բանկի հնարավորությունը՝ ըստ բնութագրիչ ռիսկերի տնօրինվող ակտիվների տեղաբաշխման ճյուղային կառուցվածքն արդյունավետ վերահսկելու համար:**

• Ատենախոսությունում որպես գիտական նորույթ ներկայացված չորրորդ դրույթը՝ «... Մշակվել է առևտրային բանկերի գործունեության թվային փոխակերպման գործընթացում ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության ճկուն համակարգ, որով հնարավորություն է ստեղծվում բարելավելու վերահսկողական գործընթացները և միաժամանակ բացահայտելու ֆինանսական միջնորդության էկոհամակարգի արտաքին ու ներքին ռիսկային մարտահրավերները:...:» ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության ճկուն համակարգի առումով ևս մանրամասնման կարիք ուներ: Հարց է առաջանում, թե ինչումն է կատարված առաջարկի առանձնահատկությունը: Միաժամանակ, ֆինանսական միջնորդության էկոհամակարգի արտաքին ու ներքին ռիսկային մարտահրավերները բացահայտելով հանդերձ դրանք հստակ լուծումների կարիք ունեին:

• Ատենախոսության 1.1. «Ֆինանսական ռիսկերի գնահատման տեսական և կիրառական հիմնական հայեցակարգերը» ենթահարցում հեղինակի կողմից հիմնական շեշտադրումները կատարվել են VaR հայեցակարգի շրջանակներում: Լիարժեք խորությամբ չի ներկայացվել վարիացիոն, պորտֆելի վերլուծությունը, Բազել III-ով վարկային ռիսկի և շուկայական ռիսկի գնահատման համար կարգավորան պահանջները, ածանցյալ գործիքնեչի օգտագործման

հնարավորությունները և տեխնոլոգիական նորարարությունը, ինչպիսիք են մեքենայական ուսուցումը և արհեստական ինտելեկտը, որոնց կիրառմամբ ներկայումս առևտրային բանկերը ներդնում են ռիսկերի գնահատման նոր մեթոդներ և մոդելներ, ինչը թույլ են տալիս ավելի ճշգրիտ կանխատեսել և կառավարել ռիսկերը:

• Ատենախոսը 1. 2. «Վարկային և իրացվելիության ռիսկերի գնահատման ժամանակակից մոդելները և մոտեցումները» ենթահարցում անդրադարձել է վարկային և ռիսկերի գնահատման ժամանակ առավել կիրառվող մեթոդներին, մոդելներին և մոտեցումներին: Դրանցից մի մասը (օրինակ, KMV վարկային վերահսկողության մոդելի համար հավելվածներ 7 և 8, CreditMetrics մոդելի հավելված 9) ներկայացվել են պայմանական հաշվակներով, ինչը կարծում ենք, առավել նպատակային կհամարվեր կոնկրետ և փաստացի տվյալների հիման վրա կատարված հաշվարկների առկայության դեպքում: Միաժամանակ, այս ենթահացրում լիրաժեք չեն ուսումնասիրվել վարկային ռիսկի IRB (Internal ratings-based) մոդելները, կաիտալի և իրացվելիության կառավարման մոտեցումները:

• Ատենախոսը էջ 48-ում ներկայացրել է վարկային պորտֆելի կենտրոնացվածաության չափման Հերֆինդալ-Հիշմանի համաթիվը: Կարծում ենք, որ օրինակ 1-ի տեսքով բերված պարզաբանումն ավելորդ է: Դրա փոխարեն առավել նպատակային կլիներ, աղյուսակ 3.3.5, (որը ներկայացված է էջ 110-ում), բերել ուղղակի 48 էջում և վերլուծվեր բոլոր գործող ՀՀ առևտրային բանկերը, այլ ոչ թե միայն ընտրված ութ բանկերը:

• Ատենախսը 54-60 էջերում առաջարկել է վարկային ռսկի սթրես թեստավորման երեք սցենարներ ՀՀ տաս առևտրային բանկերի համար: Նկատենք, որ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, «Արարատբանկ» ԲԲԸ, «Յունիբանկ» ԲԲԸ –ի համար բոլոր երեք սցենարներով արձանագրվել է նորմատիվային խախտումներ: Դրանց լուծոմների մասով ատենախոսն առաջարկել է սեփական մոտեցումը, սակայն այստեղ հարց է առաջանում, թե ընդհանուր նորմատիվային կապիտալի անհրաժեշտ առաջարկվող աճը ինչքանո՞վ է բխում հսկիչ ծրարը տնօրինող բաժնետերերի շահերից:

• Ատենախոսը էջ 60-ում նշում է հետևյալը. «...Այս տեսանկյունից և անհրաժեշտությունից ելնելով՝ սույն հետազոտության խնդիրն է պարզել Հայաստանում չաշխատող վարկերի գործակցի վրա մակրոտնտեսական և բանկային գործոնների երկարաժամկետ ազդեցությունը...»: Հարկ է նկատել, որ ատենախոսության խնդիրների շարքում նման ձևակերպմամբ խնդիր առկա չէ:

• Ատենախոսը 2.3. ցՎարկային ռիսկ կրող ակտիվների վրա մակրոտնտեսական և ներքին գործոնների ազդեցության մոդելային գնահատումը» ենթահարցում հաջորդական քայլերով առաջարկել է չաշխատող վարկերի գործակցի մոդելային լուծում էջեր 60-72): Հարկ է նկատել, որ կառուցված հավասարումը և կատարված ընդհանրական եզրահանգումները կոնկրետ առևտրային բանկի համար

չեն դիտարկվել և տեղայնացվել: Ներկայացվածը կրում է ընդհանրական մոտեցում և վերագրվում է ՀՀ առևտրային բանկերին:

- Ատենախոսը աշխատանքի 78 էջում նշում է, որ «...այսօր ՀՀ առևտրային բանկերում և ֆինանսական հաստատություններում առկա չաշխատող ակտիվները հիմնականում գոյացել են ոչ արդյունավետ սթրես թեստավորման հետևանքով, քանի որ կիրառվում է միայն «Top-down» մոտեցումը: Ոչ համարժեք վերլուծությունները հանգեցրել են ՉՎԱ զգալի աճին՝ վերջին մի քանի տարիների ընթացքում ...:» Սակայն հարկ նկատել, որ այն հակասում է ատենախոսության 52 էջում արդեն իսկ ներկայացված վերլուծական տեսակետին «...Դիտարկելով ՀՀ բանկերի չաշխատող վարկերի գործակիցը ամսական կտրվածքով (գծապատկեր 2.2.2)՝ նկատում ենք, որ այդ ցուցանիշը 2016 թվականի առաջին եռամսյակում հասել է 6,8%-ի, ապա 2018 թվականի չորրորդ եռամսյակում արձանագրվել է նվազման միտում՝ հասնելով 4,8%-ի: 2018 թվականից սկսած՝ նկատվում է աճ, որն ավելի ակնառու է դառնում 2021 թվականի երկրորդ եռամսյակում (2020 թվականի չորրորդ եռամսյակում՝ 5,0%) ...:»
- էջ 85-ում բերված նկարագրությունը ավելորդ էր:
- Աշխատանքի եզրակացություն բաժինը բավականին ընդգրկուն է ներկայացված, այն մասնավորապես և եզրհանգումների, և առաջարկությունների մասով հստակեցման անհրաժեշտություն ուներ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունների շտկումը կարող էին օգտակար լինել ատենախոսության գիտական արդյունքները սահմանելիս: Ատենախոս Ա. Ս. Համբարձումյանը կատարել է ուշագրավ, ծավալուն, տեսամեթոդական և կիրառական բնույթի մոտեցումներ պարունակող հետազոտություն: Այն կարելի է որակել, որպես ինքնուրույն կատարված հետազոտություն, որտեղ դրված և լուծված են ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության կատարելագործման տեսական և գործնական հեղինակի կողմից տարբերակված մի շարք կարևոր խնդիրներ:

Սեղմագիրը կազմված է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներին ելնելով և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանն ու արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական վեց հոդվածներում, որպես գիտական նորույթ ներկայացված դրույթները ստացել են իրենց լուսաբանումը:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ **«ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության կատարելագործման հիմնախնդիրները»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը

բավարարում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ **Արման Սամվելի Համբարձումյանն** հաջող պաշտպանության դեպքում արժանի է տնտեսագիտության թեկանծուի գիտական աստիճանի շնորհմանը:

**Պաշտոնական ընդդիմախոս,**
**Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր** **Ա.Վ.Մաթևոսյան**

**Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Վ. Մաթևոսյանի ստորագրությունը հաստատում եմ**
**ՀՊՏՀ գիտ.քարտուղար** **Ն.Հ.Դարբինյան**

26.06.2024թ.